# ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ԵՎ ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
# СООБЩЕНИЯ И ЗАМЕТКИ

## ՄԱՅԻՍՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՍՈՎԵՏԱՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

(Ապստամբության 50-ամյակի առթիվ)

Ա. Հ. ՄԵԼՔՈՆՅԱՆ

*Մայիսյան ապստամբության պատմությանը նվիրված առաջին ուսումնասիրությունը պատկանում է Աշոտ Հովհաննիսյանի գրչին։ Դա նրա «Հայաստանի հեղափոխության հուլիսն ու հոկտեմբերը» խորագիրը կրող հոդվածն է, որը լույս տեսավ 1923 թ. («Նորք», գիրք երկրորդ, 1923 թ., էջ 97—142)։*

*Այստեղ, դեպքերի թարմ տպավորության տակ, հարուստ փաստական նյութերի հիման վրա, սեղմ շարադրված է Մայիսյան ապստամբության գիտական պատմությունը։ Մայիսյան ապստամբության պատմության վերաբերյալ վերջին խոսքը թողնելով ապագա պատմաբանին, հեղինակը իրավացիորեն գրել է.*

*«Այթաքումներն անխուսափելի են, բայց և անհրաժեշտ։ Քանի որ այդ գնով է միայն հնարավոր մշակել կայուն տեսակետ մոտիկ անցյալի գալիք ուսումնասիրությունների համար» «Նորք», գիրք երկրորդ, 1923, էջ 97)։*

*1926 թ. Մոսկվայում հայերեն լեզվով լույս տեսավ Շավարշ Ամիրխանյանի «Մայիսյան ապստամբությունը Հայաստանում (1920). Գնահատության փորձ» վերնագրով աշխատությունը, որը լուրջ ներդրում է Մայիսյան ապստամբության պատմագրության մեջ։ Հեղինակը նպատակ չի դրել տալու Մայիսյան ապստամբության ամբողջական պատմությունը, այլ, ինչպես ցույց է տալիս գրքի վերնագիրը, «գնահատության փորձ» է կատարել։ Նա միաժամանակ փաստական մեծ նյութ է տվել ապստամբության պատմության համար, քանի որ ինքը եղել է Դիլիջանի (Ղազախ-Շամշադինի) գավառային ռազմա-հեղափոխական կոմիտեի նախագահը, ապստամբության ղեկավարներից մեկը։*

*Սակայն պետք է նշել, որ Ամիրխանյանը անիրավացի մեղադրանքներ է շպրտել Արմենկոմի և Ալեքսանդրապոլի կոմիտեի հասցեին։ Հեղինակը սխալվում է հեղափոխական ուժերի գնահատման և ապստամբության բնույթի հարցերում, քննադատական խոսք չի ասում Դիլիջանի գավառային կոմիտեի գործունեության մասին։*

*Մայիսյան ապստամբության պատմության հարցի շուրջը 1927—1928 թթ. մամուլում ծավալվեց կրքոտ բանավեճ, որին մասնակցեցին ապստամբության մասնակիցներ, գրականագետներ և ուրիշներ։ 1927 թ. «Կոմունիստ» ամսագրի խմբագրությունը մտքերի փոխանակության կարգով լույս ընծայեց գրական քննադատ Ռ. Վանանդեցու «Մայիսյան ապստամբության գնահատման փորձի առթիվ» հոդվածը («Կոմունիստ», 1927, № 6), որով նա քննադատում էր Ա. Հովհաննիսյանի և Շ. Ամիրխանյանի վերը հիշատակված աշխատությունները։ «Մայիսյան ապստամբությունը Հայաստանում (Շ. Ամիրխանյանի գրքի առթիվ)» հակագիտական հոդվածով («Կոմունիստ», 1927, № 9—10) հանդես եկավ Հ. Դուրգարյանը, որտեղ նա, նսեմացնելով Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների դերը և բանվորների ու գյուղացիների հեղափոխական ուժերը, գրում էր, թե «Հայաստանում 1920 թ. մայիսին ապստամբության համար օբյեկտիվ պայմաններ դեռ չէին հասունացել» («Կոմունիստ», 1927, № 9—10), էջ 98)։*

*Հ. Դուրգարյանին արժանի հակահարված տվեցին Շ. Ամիրխանյանը՝ «Մեշչանական դատողություն Մայիսյան ապստամբության մասին» («Կոմունիստ», 1928, № 3), Անանիա Բերբերյանը՝ «Պատասխան ընկ. Հովհ. Դուրգարյանին (Նրա «Մայիսյան ապստամբությունը Հայաստանում» քննադատական դրվածքի առթիվ») («Լենինյան ուղիով», 1928, № 1—2) և Մամբրե Գարագաշը՝ «Մայիսյան ապստամբության և դաշնակցության գնահատականի մի փորձի առթիվ (ընկ. Գ. Վանանդեցու հոդվածի առթիվ)» («Կոմունիստ», 1928, № 1) հոդվածներով։*

1929 թ. լույս տեսավ Թադևոս Մանդալյանի «Մայիսյան ապստամբությունը» գրքույկը։ Քննադատելով Շ. Ամիրխանյանին, նա իրավացիորեն գրում էր. «Որքան էլ թույլ լիներ մեր պրոլետարիատը, այնուամենայնիվ, միայն նա էր, որ կարող էր հեղափոխական շարժման ղեկավարը հանդիսանալ» (էջ 25)։ Թ. Մանդալյանը հիմնավորված կերպով բացահայտում է դաշնակցություն կուսակցության բուրժուական էությունը, նրա սերտ կապը ռուսական բուրժուազիայի հետ, փոխադարձ օգնությունը սպիտակ գվարդիական գեներալներ Դենիկինին և Վրանգելին (էջ 3—13) և կշտամբում է Շ. Ամիրխանյանին ու Ա. Հովհաննիսյանին, որոնք խուսափում կամ սխալ են մեկնաբանում այդ կուսակցության էությունը։

Չնայած որոշ իմաստով Թ. Մանդալյանի գրքույկի վրա կա ժամանակի կնիքը Արմենկոմի և Ալեքսանդրապոլի կոմիտեի գործունեության քննադատության հարցում (նա սխալվում է հունվարյան կոնֆերանսի որոշման վերլուծման մեջ), բայց և այնպես այդ գրքույկը մնում է որպես արժեքավոր ուսումնասիրություն Մայիսյան ապստամբության պատմության վերաբերյալ գրականության մեջ։ Մանդալյանը հիմնականում ճիշտ է վերլուծել ապստամբության պատճառները։

1929 թ. լույս տեսավ Բ. Բորյանի «Հայաստանը, միջազգային դիվանագիտությունը և ՍՍՀՄ-ը» երկհատոր աշխատությունը ռուսերեն լեզվով, որի մեջ նա կանգ է առել նաև Մայիսյան ապստամբության պատմության հարցերի վրա։ Սակայն ցավալի է, որ այստեղ սպրդել են չհիմնավորված մեղադրանքներ Արմենկոմի հասցեին։

1930 թ. ՀԿ(բ)Կ Կենտկոմի կուսպատ բաժինը լույս ընծայեց Մայիսյան ապստամբության տասներորդ տարեդարձին նվիրված հատուկ ժողովածու («Մայիսյան ապստամբությունը Հայաստանում (1920—1930)», Երևան, 1930), որը Մայիսյան ապստամբության պատմության համար կարևոր աղբյուր է հանդիսանում։ Ժողովածուն ունի ներածություն, որտեղ տրված է Մայիսյան ապստամբության ճիշտ գնահատականը։ Այնտեղ զետեղված են Մայիսյան ապստամբության 22 մասնակիցների գրած հիշողությունները և շատ փաստաթղթեր (Արմենկոմի 1920 թ. մայիսի 31-ի զեկուցագիրը, մի շարք կոչեր, Ալեքսանդրապոլի կոմիտեի նամակները Արմենկոմին, Ս. Մուսայելյանի բանտից գրած զեկուցագիրը երկրային կոմիտեին և այլն)։ Հիշյալ ժողովածուում զետեղված են նաև 15 նկար, որոնց թվում՝ Արմենկոմի, Հայաստանի ռազմա-հեղափոխական կոմիտեների կազմի և այլ նկարներ։ Հավելվածում տրված են ռազմա-հեղափոխական կոմիտեների, ապստամբության ընթացքում զոհվածների և դաշնակցական կառավարության կողմից դնդակահարված ու բանտարկված կոմունիստների ցուցակները։ Հիշյալ ցուցակներն ու շատ փաստեր դեռ ճշտման ու լրացման կարոտ են։ Հենց այս նկատի ունենալով, ժողովածուի «Երկու խոսք» վերջաբանում ասված է. «Իրազեկ բոլոր ընկերների ուշադրությունն է հրավիրվում... մասսայական օժանդակությամբ հնարավորություն ստեղծելու լրացնել մեր երկրի հեղափոխության պատմության արձանագրման բոլոր թերությունները» (էջ 205)։

Նույն թվականին լույս տեսան Ս. Խանոյանի «Մայիսյան ապստամբությունը (1920—1930)» և Ա. Մելիք-Շահնազարյանի «Մայիսյան ապստամբությունը Հայաստանում» գրքույկները։ Առաջինն ունի մի ամփոփ տեղեկագրի բնույթ, երկրորդը, որպես ապստամբության շրջանում Ալեքսանդրապոլում գործող կարմիր զորամասերի հրամանատարի գրած հուշեր, արժեքավոր նյութ է տալիս այնտեղ ծավալված ռազմական գործողությունների մասին։ Առաջինը կազմում է ընդամենը 24 էջ, երկրորդը՝ 16։

1932 թ. ՀԿ(բ)Կ Կենտկոմի կուսպատ բաժինը վերածվեց ՀԿ(բ)Կ Կենտկոմին կից կուսպատ ինստիտուտի և մեծ աշխատանք տարավ Մայիսյան ապստամբության պատմության վերաբերյալ փաստաթղթերի հավաքման ուղղությամբ։ Նա նույն թվականին լույս ընծայեց «Առաջին մասսայական-հեղափոխական շարժումները Հայաստանում (Մայիսյան ապստամբությունը), նյութեր և փաստաթղթեր» խորագրով ծավալուն ժողովածուն (457 էջ), որը հարուստ նյութեր էր պարունակում Մայիսյան ապստամբության վերաբերյալ։ Ժողովածուն կազմել են Կ. Ղազարյանը և Մ. Ներսիսյանը, նյութերի հավաքմանը և ծանոթագրությունները կազմելուն մասնակցել է Վ. Պարսամյանը, խմբագրել և ներածականը գրել է Կ. Ղազարյանը։ Ժողովածուի ներածականը, որն ունի «Մայիսյան ապստամբությունների նշանակությունը և տեղը Հայաստանի նորագույն պատմության մեջ» խորագիրը, լուրջ աշխատություն է Մայիսյան ապրստամբության մասին, ծավալով ավելի մեծ (70 ծավալուն էջ), քան Մայիսյան ապստամբության վերաբերյալ Թ. Մանդալյանի, Ս. Խանոյանի և Ա. Մելիք-Շահնազարյանի գրքույկները միասին վերցրած։ Այն գրված է մարքսիստական դիրքերից, արժանավոր տեղ է գրավում Մայիսյան ապստամբության պատմության մասին եղած գրականության ցանկում։ Չնայած նրանում

տեղ գտած առանձին ձևակերպումներին (էջ 43, 44, 58), որոնց հետ այժմ համաձայնվել չի կարելի, այնուամենայնիվ նրանում առաջ քաշված դրույթները և Մայիսյան ապստամբության վերաբերյալ մինչ այդ եղած գրականության հեղինակների հասցեին արված քննադատական դիտողությունները (էջ 53, 55, 63, 65, 66 և այլն), որ վերաբերում են Ս. Կասյանին, Շ. Ամիրխանյանին, Ա. Հովհաննիսյանին, Գր. Զուբարին և ուրիշներին, հիմնականում ճիշտ են։

Ժողովածուում զետեղված փաստաթղթերը արժեքավոր աղբյուր են Մայիսյան ապստամբության պատմության համար։ Միայն պետք է ցավալ, որ ժողովածուում զետեղված արխիվային փաստաթղթերի աղբյուրները չեն նշված։

Նույն թվականին ՀԿ(բ)Կ Կենտկոմին կից կուսպատ ինստիտուտը լույս ընծայեց «Մայիսյան ապստամբության Ալբոմը»։ Ալբոմն ունի «Մայիսյան ապստամբությունը Հայաստանում» խորագրով առաջաբան, որտեղ սեղմ կերպով խոսվում է Մայիսյան ապստամբության ու նրա պատմական նշանակության մասին։ Այնտեղ զետեղված են Մայիսյան ապստամբության հերոսներ Ստ. Ալավերդյանի, Հ. Սարուխանյանի, Ղ. Ղուկասյանի, Ս. Մուսայելյանի, Բ. Ղարիբջանյանի, Ե. Մկրտումյանի, Վ. Ալեքսեևի, Ե. Սևյանի, Բ. Բատիկյանի, Ա. Մելքոնյանի և Ա. Փանյանի մեծադիր դիմանկարներն ու կենսագրականները, ինչպես նաև Մայիսյան ապստամբության հետ կապված հիշարժան վայրերի շատ լուսանկարներ։ Ալբոմը կազմել է Մ. Ներսիսյանը, պատասխանատու խմբագիրն է քաղաքացիական կոիվների ակտիվ մասնակից, անվանի հայ պոետ Եղիշե Չարենցը։

1935 թ. լույս տեսավ Ա. Խանջյանի «Մայիսյան ապստամբությունից դեպի Նոյեմբերյան հաղթանակը» գրքույկը, որը Մայիսյան ապստամբության 15-ամյակի առթիվ Լենինականի կուսակցական և բանվորական ակտիվի ժողովում 1935 թ. ապրիլի 22-ին կարդացած զեկուցումն է։ Սա Մայիսյան ապստամբության վերաբերյալ մինչ այդ եղած գրականության մեջ ամենաարժեքավորն է, թեև հատուկ ուսումնասիրություն չէ Մայիսյան ապստամբության մասին։ Ա. Խանջյանի այս աշխատությունը բաղկացած է հետևյալ բաժիններից. 1) Դաշնակցական Հայաստանն իմպերիալիզմի ձեռնածուն. 2) Տնտեսական անկումը դաշնակցական Հայաստանում. 3) Բանվորների և աշխատավոր գյուղացիների թշվառ կացությունը դաշնակցական Հայաստանում. 4) Մայիսյան ապստամբության համառոտ ուրվագիծը. 5) Ռեակցիայի բոլոր ուժերի միասնական ֆրոնտը Մայիսյան ապստամբության դեմ. 6) Մայիսյան ապստամբության պարտության պատճառները. 7) Նրանք տվին խորհրդային հայրենասիրության փայլուն օրինակ. 8) Հայ բուրժուազիայի և նրա կուսակցության «հայրենասիրական» կեղծիքը. 9) Հայաստանի դաժան երեկն ու կենսուրախ այսօրը. 10) Միշտ վառ ու բոցավառ խորհրդային հայրենասիրությունը։

Իր այդ սեղմ շարադրանքում Ա. Խանջյանը ճիշտ է վերլուծել երկրի նախամայիսյան շրջանի իրավիճակը, ճիշտ է բնութագրել բուրժուա-նացիոնալիստական կուսակցություններին ու նրանց հակահեղափոխական գործունեությունը ապստամբության շրջանում։ Խոսելով Մայիսյան ապստամբության պարտության պատճառների մասին, Ա. Խանջյանը որոշակի նշում է, որ «Մայիսյան ապստամբությունը բոլոր տվյալներն ուներ՝ հաղթանակով պսակվելու»։ Նա ապստամբության պարտության պատճառները խիստ համառոտ, բայց հիմնականում ճիշտ է վերլուծել։

Ա. Խանջյանի «Մայիսյան ապստամբությունից դեպի Նոյեմբերյան հաղթանակը» գրքով, կարելի է ասել, վերջանում է Մայիսյան ապստամբության պատմության վերաբերյալ ստեղծված գրականության առաջին շրջանը։ Նրանից հետո անհատի պաշտամունքի շրջանում որոշ ժամանակով ընդհատվեց համապատասխան գրականության հրապարակումը։

Կարելի է ասել, որ 1936—1953 թթ. ընկած ժամանակամիջոցում Մայիսյան ապստամբության մասին լույս տեսան միայն առանձին լրագրային հոդվածներ, որոնցում, սակայն, ապստամբության պատմությունը մեծ մասամբ ներկայացված է ծուռ հայելու մեջ։

Մայիսյան ապստամբության պատմության վերաբերյալ նոր աշխատություններ լույս տեսան 1950-ական թթ.։ Այսպես, 1955 թ. լույս տեսավ Հ. Տոնոյանի «Փառապանծ էջ Հայաստանի ռևոլյուցիոն շարժումների պատմությունից. 1920 թ. Մայիսյան ապստամբությունը Հայաստանում (համառոտակի ակնարկ)» գրքույկը (101 էջ)։ Հեղինակը արխիվային փաստաթղթերի հիման վրա տվել է, ինչպես ինքն է գրել, համառոտ ակնարկ Մայիսյան ապստամբության մասին, ընդ որում, գիտական շրջանառության մեջ է դրել նոր փաստաթղթեր։ Սակայն այս գրքում էլ դեռևս կան Արմենկոմի և ՀՌՀ կոմիտեի հասցեին անհիմն մեղադրանքներ (էջ 90—96)։

Նույն թվականին լույս տեսավ Գ. Ղարիբջանյանի «Մայիսյան ապստամբությունը 1920 թվականին» գրքույկը (118 էջ)։ Հեղինակն օգտագործել է ՀՌՀ կոմիտեի 1920 թ. մայիսի 13-ի

ընդլայնված նիստի արձանագրությունը, հավելվածում հրապարակել է Ս. Մուսայելյանի Երևանի բանտից ՌԿ(բ) Կովկասյան երկրային կոմիտեին գրած նամակը և Բ. Ղարիբջանյանի՝ դաշնակցական դատարանում արտասանած «Մահապատժից առաջ» ճառը, որոնք Մայիսյան ապստամբության պատմության համար կարևոր փաստաթղթեր են։ Սակայն չի կարելի լրիվ համաձայնվել հեղինակի հետ, երբ նա գրում է. «ՌԿ(բ)Կ Հայաստանի կոմտեն և Հայաստանի Ռազմա-հեղափոխական կոմիտեն թույլ տվեցին լուրջ քաղաքական և ռազմա-ստրատեգիական սխալներ» (էջ 91)։

1960 թ. լույս տեսավ Գ. Գալոյանի «Մայիսյան հերոսական ապստամբությունը» գրքույկը (116 էջ), որը գրվել է Հայպետուսմանկհրատի պատվերով՝ միջնակարգ դպրոցների ուսուցիչների և բարձր դասարանների աշակերտների համար։ Գրքույկը հանրամատչելի շարադրանք է Մայիսյան ապստամբության մասին։ Այնտեղ զետեղված են Մայիսյան ապստամբության 13 հերոսների նկարները և վերջում տրված են նրանց համառոտ կենսագրությունները, որոնք գրքույկն ավելի հետաքրքիր են դարձնում։ Բայց հեղինակը չի փորձել Մայիսյան ապստամբության պատմության չլուծված կամ վիճելի հարցերի վերաբերյալ իր կարծիքը հայտնել։

1961 թ. լույս տեսավ Հ. Կարապետյանի «Մայիսյան ապստամբությունը Հայաստանում 1920 թ.» աշխատությունը, որը Մայիսյան ապստամբության մասին առաջին ծավալուն (338 էջ), ամբողջական ուսումնասիրությունն է։ Բայց հեղինակը, ինչպես ինքն է գրում, չի սպառել «Մայիսյան ապստամբությանը վերաբերող բոլոր հարցերը» (էջ 7)։ Ապստամբության մասնակիցների միջոցով նա ճշտել է շատ փաստեր։ Գրքում զետեղված են Ռազմա-հեղափոխական կոմիտեի, ապստամբության մասնակիցների խմբանկարները, ինչպես նաև «Վարդան Զորավար» զրահագնացքի անձնակազմի մի խումբ մարտիկների, Ալեքսանդրապոլում ապստամբության մասնակից հեծյալ գնդերի մի խումբ սպաների և զինվորների խմբանկարները և այլն։ Հեղինակը, սակայն, շրջանցել է Մայիսյան ապստամբության պատմության վիճելի և չլուծված որոշ հարցեր։

Մայիսյան ապստամբության պատմության համար կարևոր աղբյուր են «Հին բոլշևիկների հիշողություններ» ժողովածուն, որի առաջին գիրքը լույս տեսավ 1958 թ., երկրորդը՝ 1961 թ., ինչպես նաև ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի, ՄԼԻ հայկական ֆիլիալի և ՀՍՍՀ ՆԳՄ արխիվային վարչության հրատարակած «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում» փաստաթղթերի և նյութերի ժողովածուն, որը ռուսերեն լույս տեսավ 1957 թ., հայերեն՝ 1960 թ.։

Պարբերական մամուլում Մայիսյան ապստամբության վերաբերյալ լույս են տեսել բազմաթիվ հոդվածներ։ Դրանցից նշենք միայն Ավիս Նուրիջանյանի հոդվածն ու ելույթը Կոմինտերնի II կոնգրեսում 1920 թ. հուլիսին, որոնք և առաջինն են Մայիսյան ապստամբության վերաբերյալ գրականության մեջ, և առանձին հետաքրքրություն են ներկայացնում։

1920 թ. հունիսի 3-ին Բաքվում ռուսերեն լեզվով լույս տեսնող «Կոմունիստ» թերթում, իսկ հունիսի 8-ին՝ հայերեն լեզվով լույս տեսնող «Կոմունիստ» թերթում լույս տեսավ Ա. Նուրիջանյանի «Ապստամբությունը Հայաստանում» հոդվածը։ 1920 թ. հուլիսին Կոմինտերնի երկրորդ կոնգրեսում նա հանդես եկավ «Կոմունիզմը Հայաստանում» թեմայով զեկուցմամբ։ Այս զեկուցումը տպագրվեց «Коммунистический интернационал» ամսագրի 1920 թ. № 13-ում (այս զեկուցումը զետեղված է նաև «Առաջին մասսայական-հեղափոխական շարժումները Հայաստանում» և «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում» ժողովածուներում։

Ավիս Նուրիջանյանի վերոհիշյալ հոդվածներն ու զեկուցումը հիմնականում միևնույն բովանդակությունն ունեն։ Այնտեղ կան հետաքրքիր տեղեկություններ Հայաստանի հեղափոխական շարժման, կոմունիստական կազմակերպությունների դրության ու գործունեության մասին։ Բայց այնտեղ կան Ալեքսանդրապոլի ապստամբության մասին բացահայտ անճշտություններ։ Այսպես, օրինակ, նա գրել է. «Մայիսի 14-ին կառավարական զորքերը կրակ բացին քաղաքի վրա։ Երկու ժամ տևող կատաղի կռվից հետո, խորհրդային զորքերը թողնում են քաղաքը և ցրվում Հայաստանի զանազան կողմերը։ Կառավարական զորքը քաղաք է մտնում և 14-ի առավոտյան սովետական իշխանությունն ընկնում է» («Коммунистический интернационал», 1920, № 13, էջ 2550)։

Ավիսի հաղորդումը իրականությանը չի համապատասխանում։ Մայիսի 14-ի առավոտյան կառավարական զորքերը քաղաքի վրա ոչ մի կրակ չեն բացել։ Դրա կարիքը չի եղել։

1959—1960 թթ. «Լենինյան ուղիով» ամսագրի էջերում Մայիսյան ապստամբության պատմության հարցերի շուրջը նորից բանավեճ սկսվեց։ Ամսագրի խմբագրությունը մտքերի փոխանակության կարգով լույս ընծայեց Շ. Ամիրխանյանի «Հայաստանում Մայիսյան ապստամբու-

թյան (1920 թ.) բնույթի մասին» հոդվածը («Լենինյան ուղիով», 1959, № 7), ուր թույլ էին տրված մի շարք լուրջ սխալներ։

Շ. Ամիրխանյանի դեմ միանգամայն ճիշտ դիրքերից հանդես եկավ Ղարսի ապստամբության մասնակից, հին բոլշևիկ Լևոն Ղազարյանն իր «Մենք համաձայն չենք» հոդվածով («Լենինյան ուղիով», 1959, № 12)։ «Առարկելի դրույթներ» հոդվածով հանդես եկավ նաև Հ. Տոնոյանը, որը Մայիսյան ապստամբության բնույթի մասին ճիշտ դիրքերից քննադատեց Շ. Ամիրխանյանին։

Մի քանի դիտողություններ։

Մայիսյան ապստամբության պարտության պատճառների հարցը դեռևս լրիվ պարզաբանված չէ։ Մեր պատմաբանները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն այս խնդրի վրա։

Մայիսյան ապստամբության հերոսների շարքը պետք է դասվեն գեներալ Ք. Ա. Խաչատուրովը, որին դաշնակները 1920 թ. մայիսի 13-ին Ալեքսանդրապոլում տեռորի ենթարկեցին՝ ապստամբների կողմն անցնելու համար և Ալեքսանդրապոլում ապստամբության օրերին ապստամբ-գործող զորամասերի հրամանատար, գնդապետ Ա. Մելիք-Շահնազարյանը։

Առանց հուզմունքի չի կարելի ծանոթանալ Հայաստանի կոմունիստական կուսակցության առաջին ղեկավար, տեսականորեն պատրաստված մարքսիստ, Մայիսյան ապստամբության հերոս Ստեփան Ալավերդյանի անձնուրաց գործունեությանը։ Մեր կարծիքով, վաղուց ժամանակն է ըստ արժանվույն հավերժացնելու նրա հիշատակը։